ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1414-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետությանկառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ, 49-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8, 11 և 13-րդ կետերի <<ա>> և <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> թիվ 600-Ն որոշման 2-րդ հավելվածի 6-րդ կետով 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման N-1 հավելվածի 49-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ հունվարի 17-ի թիվ 01 արտահերթ նիստ 006-Ա որոշում և ինքնակամ կառույցն իրականացրած անձի Սաշա Ապետի Առաքելյանի 09.10.2023թ. թիվ 5633 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Սեփականության իրավունքով(հիմք՝ սեփականության 08102020-04-0031 վկայական) Սաշա Ապետի Առաքելյանին պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Նորավան գյուղ 1-ին փողոց 28 /04-076-0039-0015 կադաստրային ծածկագրի/ 1174.0 քմ մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 104.0 քմ ներքին մակերեսով և 125.0 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, անասնաշենքը՝ 111.2 քմ ներքին մակերեսով և 135.2 քմ արտաքին մակերեսով և պարիսպի 6.63 քմ մակերեսով ճանաչել օրինական մակերեսով :

2. Ընդունել ի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Սահմանել, որ իքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18– ի<<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր արտաքին 125.0 քմ մակերեսով բնակելի տան օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 1028 ՀՀ դրամ ընդհանուր 128500 /մեկ հարյուր քսանութ հազար հինգ հարյուր/ 141.83 քմ մակերեսով օժանդակ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 6-ապատիկի չափով՝ 616.8 ՀՀ դրամ ընդհանուր 87481 (ութսունյոթ հազար չորս հարյուր ութսունմեկ) ՀՀ դրամ, ընդհանուր օրինականացման գումարը կազմում է 215981 /երկու հարյուր տասնհինգ հազար ինը հարյուր ութսունմեկ/ ՀՀ դրամ :

4.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Նորավան գյուղ 1-ին փողոց 28 գույքի հաշվառման (չափագրման)տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023PQSFWV:

5. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. նոյեմբեր 30
ք. Արմավիր